Հասմիկ Հովհաննիսյանի արվեստը

Յուրաքանչյուր ստեղծագործող վերստին ծնում է մի նոր աշխարհ, որը միայն իրենն էր մինչ այն պահը, երբ անձնականից վերածվում է անաձնականի: Յուրաքանչյուր նկարիչ իր նախասիրություններով, իր մտածողությամբ, գծի ու գույնի իր զգացողությամբ նյութը վերածում է աշխարհի, շրջապատի, մարդու սեփական ընկալման, նա հանդիսատեսին է ներկայանում ճանաչողության, տեսողության իր մեկնակետով, ստիպում հանդիսատեսին գնահատել միջավայրն իր պրիզմայի միջոցով: Ընդ որում, հանդիսատեսին առանձնապես չի հուզում նկարչի պատկանելությունը այս կամ այն «իզմ»-ին, այս կամ այն շրջանակին, ավելին, առանձնապես կարևոր չէ որևէ հստակ ձևի կամ իրավիճակի առկայությունը: Էականն այն է, որ կայանա արվեստագետ-հանդիսատես երկխոսությունը, որ նկարիչը կարողանա իր հոգում հնչող նոտաները վերածել մեղեդու և նվագել այն: Եվ այն դեպքում է տեղի ունենում իսկական երկխոսությունը, երբ ակնդիր-նկարիչ հարաբերության մեջ առկա է փոխզգացողություն, երբ խթանները ընդհանուր հույզերն են, ընդհանուր ապրումն ու աշխարհընկալումը:

Հասմիկ Հովհաննիսյանի ստեղծագործությունը ներառում է հիմնականում երեք ժանր՝ նատյուրմորտ, բնապատկեր, դիմանկար:

Նկարչուհին հանդես է գալիս իբրև բնության դիտորդ, հանդիսատես, որը քաջ գիտե իր դիտման օբյեկտը՝ իր ապրումներով, էությամբ:

Նատյուրմորտներում հատուկ տեղ ունեն ծաղիկները: Այստեղ պատկերված յուրաքանչյուր ծաղիկ, յուրաքանչյուր բույս ասես պատկերված է իր դիմանկարով, այսինքն՝ իրեն յուրահատուկ բնույթով, տրամադրությամբ, կեցվածքով, որոնք երբեմն անչափ նման են մարդկային հոգեբանությանն ու ապրումներին: Համադրելով «Վարդեր» (2008) և «Երիցուկներ» (2007) ստեղծագործությունները՝ կարելի է ասել, որ դրանք շնչում են քնքշությամբ ու նրբությամբ, երկուսն էլ պարուրված են թարմությամբ ու բնական շնչառությամբ: Այստեղ մենք տեսնում ենք բնության հաստատ ներկայությունը, տեսնում ենք այն, ինչ հատուկ է դաշտերին ու անձրևով ցողված մարգագետիններին, այն անշոշափելին, ինչ սովոր ենք բնություն անվանելու:

Այս երկու ստեղծագործությունները, սակայն, էապես տարբերվում են միմյանցից, իրենց կատարման տեխնիկայով և գունային լուծումներով: Վարդը շքեղ երանգավորում ունի, ընդ որում, կոնտրաստներով նկարվել է հատու, ուժեղ վրձնահարվածներով, որ ստեղծագործությանը հաղորդում է որոշակի կտրուկ տրամադրություն, որոշակի թափ, որն այնքան հատուկ է այս ծաղկին՝ իր հպարտ կեցվածքով ու էությամբ: «Երիցուկներն», ընդհակառակը, վրձնել է տոնային նուրբ

անցումներով, միջավայրը պատկերված է համեմատաբար չեզոք, որը ընդհանուր պատկերին հաղորդում է նրբություն:

Հասմիկ Հովհաննիսյանի ստեղծագործության մեջ կարևոր են նաև բնապատկերային ստեղծագործությունները: Դրանք, որ ներդաշնակ են նկարչուհու էությանը և նրա ստեղծագործությունների ընդհանուր տրամադրությանը մտերմիկ բնույթ ունեն, փափուկ տոնայնության մեջ են: Ստեղծագործությունները կատարված են զարմանալի "ուժեղ վրձնով", զարմանալի, եթե համեմատենք տրամադրությունն ու կատարումը: Հատկապես բնապատկերներում հակադրության մեջ են դրվում և, միաժամանակ, միմյանցով լրացվում են տրամադրության էլաստիկությունն ու հատու, խոշոր վրձնահարվածը, փափուկ տոնային անցումներն ու հատվող գծերը, նույնիսկ հեռանկարային տարածքներում նշմարվող մտերմիկ, տնային միջավայրն ու խոշոր վրձնահարվածներով կատարված ընդհանրությունները, որը մեր կարծիքով, յուրահատուկ հմայք է հաղորդում այս ստեղծագործություններին:



Նկարչուհու բնապատկերային ստեղծագործություններում առաջին հերթին նկատելի է հետևյալ օրինաչափությունը. այս գործերը հիմնականում էտյուդային բնույթի են, կատարված են մի շնչով: Այստեղ հիմնականում բացակայում է ստեղծագործության նկատմամբ մոնումենտալ մոտեցումը: Բնապատկերները Հասմիկ Հովհաննիսյանի մտապատկերում կրում են անհատի ընկալման շունչը, ասել է թե՝ նկարչուհու անձնական վերապրման արգասիքն են: Նույնիսկ այն աշխատանքներում, որտեղ բացակայում է մարդու կերպարը, զգացվում է նրա ներկայությունը: Մարդու ներկայությունն ի հայտ է գալիս հիմնականում շունչ կրող տների, կամ էլ ատրիբուտների միջոցով, օրինակ՝ պատին հենված սանդուղքը («Այգի», 1998): Շատ հաճախ տնակները «կորել» են կանաչ զանգվածի մեջ այնպես, որ հազիվ նշմարելի են միայն դրանց տանիքները: Այլ եղանակով է կատարված «Տաթևի վանքը» (1975). նախ՝ բազմապլան, խորացող միջավայրով, և ապա՝ խոշոր ընդհանրացումներով, որոնք ձուլում են վանքի պատկերը բնությանը՝ դրանք դնելով մեկ ամբողջի չափման մեջ: Կտավի ողջ մակերեսը մշակված է խոշոր, միմյանց հատվող հատվածներով, ինչը, դառնալով մեկ ամբողջություն, ստեղծում է բեկման պատրանք: Թվում է՝ պատկերը դիտվում է անձրևի վարագույրի միջով, որի հետևանքով բեկբեկվում է ամբողջ տեսարանը: Նշված տրամադրությանն ու անձրևի պատրանքը լրացնում են նաև մոխրա-կանաչավուն տոները՝ իրենց «մառախլապատ» տրամադրությամբ:

Հասմիկ Հովհաննիսյանի նկարչության մեջ ուրույն տեղը ունի մեկ այլ ժանր՝ դիմապատկերը. նույնպես կրում է նկարչուհու ստեղծագործությունը բնութագրող ուրույն գծեր: Առաջինը, որ անմիջապես աչքի է զարնում, դիմանկարների զուտ հոգեբանական ուղղվածությունն է: Դիմանկարում, ընդհանրապես, գոյություն ունի բնորդի կերպարի բնութագրման մի քանի եղանակ.

յուրաքանչյուր նկարիչ «ընտրում» է բնորդի պատկերը վերլուծելու և ցուցադրելու այն եղանակը, որն ավելի հոգեհարազատ է իրեն՝ հոգեբանական վերլուծման և զուտ նկարչական միջոցների ընտրման տեսանկյունից:

Հասմիկ Հովհաննիսյանի համար, իբրև պատկերվող անձի հոգեբանության արտացոլում, հիմնական միջոց է հանդիսանում գույնը, որը, վերածվելով տվյալ անձի համար բնութագրական ֆորմաների, ստեղծում է մի ամբողջական կերպար՝ իր ապրումներով, բնավորության ցայտուն գծերով, էության պատկերով: Նկարչուհին իր ստեղծագործությանը բնորոշ վառվռուն գույներով, խոշոր վրձնահարվածներով, ընդհանրացված ծավալներով կերտում է հոգեբանական պատկերներ, որոնք գալիս են արտացոլելու բնորդի էությունը՝ իր ամբողջության մեջ:

Նկարչուհու ստեղծագործության մեջ իրենց ուրույն տեղն ունեն նաև պաստելով կատարված աշխատանքները: Պաստելի ընձեռած հնարավորությունները՝ ստանալ հստակ գիծ՝ մեղմության մեջ և գույն, որտեղ ստեղծագործության գրաֆիկական շեշտը դառնում է հստակ, այստեղ օգտագործված է լավագույնս: «Դիմանկար» (2000) ստեղծագործության մեջ տեսնում ենք նշված բոլոր հատկանիշները: Հատու շտրիխները, որոնցով կառուցված է դիմապատկերը, լրացված են բնորդի հոգեբանական իրավիճակն արտացոլող կարմրա-շագանակագույնի, օխրայի, դեղինի երանգներով, որոնք, սրելով համապատասխան տրամադրությունը, ստեղծագործությունը բերում են համահունչ ամբողջականության: Այլ տրամադրություն ենք տեսնում պաստելով կատարված բնապատկերներում, որտեղ այս նյութի առանձնահատկություններից մեկը՝ պատկերված տարրերն իրար մեջ ձուլելու հնարավորությունը, բնապատկերին հաղորդում է մեկ ամբողջի, միասնության զգացողություն և ներդաշնակություն:

Հասմիկ Հովհաննիսյանի ստեղծագործությունն իր ամբողջության մեջ ներկայանում է հուզական նուրբ էությամբ: Դրան նպաստում է կատարման վարպետությունը, գունակազմությունը, ձևի և բովանդակության ներդաշնակ միասնությունը, բնության հանդեպ սերը:

Նկարչուհու աշխարհը ռեալությունն է, որը, անցնելով նրա անձնական ապրման ֆիլտրով, կրելով արվեստագետի լուսավոր հայացքը, վերածվում է արվեստի ստեղծագործության:

Անուշ Հակոբյան
Արվեստաբան

Ավելի քան մեկ տասնամյակ առաջ Հասմիկ Հովհաննիսյանին երաշխավորեցի դառնալու Հայաստանի Հանրապետության նկարիչների միության անդամ, նրա՝ գեղանկարչության և կիրառական արվեստի բնագավառներում արդեն նկատելի հաջողությունների համար:

Այսօր չեմ կարող չգնահատել, որ անցած 13 տարում նա դարձել է ինքնահաստատված ու ինքնատիպ գեղանկարչուհի: Նրա ստեղծագործություններն ուշագրավ են, ունեն բարձր գեղանկարչական տվյալներ և աչքի են ընկնում կատարման առանձնահատկությամբ, գունաերանգային անկրկնելիությամբ, անկաշկանդվածությամբ ու հեղինակային ինքնատիպությամբ:

Նկարչուհու գեղարվեստական մտածողությունը և վրձինը զարմանալի ներդաշնակ են, որն էլ դառնում է նրա գործերի արժանահավատության երաշխիքը:

Ղուկաս Զուբարյան
ՀՀ ժողովրդական նկարիչ, ակադեմիկոս,
ՌԴ գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ

Երբ նկարիչը տեսածը ցանկանում է ընդհանրացնել, թողնել միայն բնորոշն ու մաքրել ավելորդությունից, խոսում է նրա մասին, որ արվեստագետը ձգտում է բարձրին, կատարյալին: Արվեստի մեջ դրանք կարևոր տարրեր են՝ լինի դիմանկար, բնանկար, թե նատյուրմորտ: Ամեն մի նկարիչ իր մոտեցումն ունի կտավին հանձնելու իր տեսածը, զգացածը և ապրածը:

Հասմիկ Հովհաննիսյանը կարողանում է կյանքը և ընկալումներն անցկացնել իր պրիզմայով և իր Ես-ով է ներկայացնում գործերը՝ ասելով՝ Ես այսպես եմ ընկալում աշխարհը, երևույթները, դուք էլ աշխատեք այսպես տեսնել, հասկանալ և դրա մեջ պարտադրանք չկա, այլ ընդամենը ցանկություն:

Գեղանկարչուհու ամենամեծ առավելությունն այն է, որ նա չի հրապուրվում էսքիզային կամ լուսապատկերային, զգայական կամ տեսլական զուգորդություններով: Ընդհակառակը՝ փորձում է թափանցել վերարտադրվող երևույթի կամ պատկերի խորքը: Երբեք չի շտապում, այլ ձգտում է կատարելության հասցնել մտահղացումը:

Նրա ստեղծագործություններն ամբողջության մեջ են՝ իրենց բնականությամբ, գեղագիտական արժեքով: Դրանք անկեղծ են, առանց ավելորդության, անմիջական և այդ բոլորով հանդերձ գրավիչ են: Դրանցից յուրաքանչյուրին հեղինակը մոտեցել և լուծել է յուրովի: Ամեն մեկն ունի իր գունային կոլորիտը, իր կոմպոզիցիոն կառուցվածքը:

Նրա գույները կենսահաստատ իմաստ են պարունակում և լավատեսական երանգներ, որոնք, ինչ խոսք, մարդկանց հոգիները հնարավորինս ջերմացնելու նպատակ ունեն:

Երբ կարդում ես արվեստի գործը, խորանում ու նոր երևույթներ-ի հետ ես առնչվում, արվեստի հետ զրույցը անհասկանալի հրճվանքի, հաճույքի, աշխարհընկալման դռներ է բացում:

Այս գործերով թող նորանոր դռներ բացվեն բոլորիս համար…

Գետիկ Բաղդասարյան
Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի
քանդակի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր,
ՀՀ պետական մրցանակի դափնեկիր,
ՀՀ նկարիչների միության անդամ